ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/17» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում 2017թ-ի սեպտեմբերի 28-ին կնքված N ԳՀԾՁԲ-7/17-1 ծածկագրով գնման պայմանագրում 2017թ-ի հոկտեմբերի 31-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են պայմանագրի գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N ԳՀԾՁԲ-7/17-1 գնման պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետը 2017թ. նոյեմբերի 1-ից տեղափոխել մինչև 2017թ. դեկտեմբերի 1-ը: Վճարման ժամանակացույցը թողնել անփոփոխ:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.5 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի պետ Ա. Գրիգորյան:

Հեռախոս՝ 010-29-44-18:

Էլ. փոստ՝ a.grigoryan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ԳՀԾՁԲ-7/17-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **31-ը հոկտեմբերի 2017թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Դառես» ՍՊԸ -ն, ի դեմս ընկերության տնօրեն Ն.Քոսակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 28.09.2017թ. կնքված N ԳՀԾՁԲ-7/17-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N ԳՀԾՁԲ-7/17-1 գնման պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետը 2017թ. նոյեմբերի 1-ից տեղափոխել մինչև 2017թ. դեկտեմբերի 1-ը: Վճարման ժամանակացույցը թողնել անփոփոխ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Դառես» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Գալշոյան փ., հար. 36շ, բն. 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570023676110100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 02624964
ՀՀ պաշտպանության նախարարության	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ն.ՔՈՍԱԿՅԱՆ